

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սանի լենդ» ՍՊԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի Սևան-Դիլիջան մայրուղի 7-8 կմ 1/1 հողամասում նախատեսվող հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և փաթեթի վերաբերյալ 2-րդ հանրային լսման

10.08.2026թ.

Ծովագյուղ բնակավայր

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն), Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի իրականացված ծանուցման համաձայն՝ 2026 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 12:00-ին Ծովագյուղ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, իրականացվել է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի Սևան-Դիլիջան մայրուղի 7-8 կմ 1/1 հողամասում նախատեսվող հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և գործունեության փորձաքննական գործընթացի վերաբերյալ երկրորդ հանրային լսում:

Հանրային լսմանը ներկա էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետները, Գեղարքունիքի մարզպետարանի և Սևանի համայնքապետարանի ներկայացուցիչները, Ծովագյուղ բնակավայրի վարչական տարածքի ղեկավարը, նախաձեռնողի ներկայացուցիչները, ազդակիր բնակավայրի բնակիչները (մասնակիցների ցանկը կցվում է):

Հանրային լսմանը բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Ա. Վարդանյանը: Նա ողջունեց ներկաներին և ներկայացրեց նախաձեռնողի կողմից հաշվետվությամբ և դրան կից փաստաթղթերով ներկայացված փորձաքննական գործընթացի ընթացակարգը, նպատակը, օրենսդրական կարգավորումները, դիտողությունների և առաջարկությունների և լրամշակման ներկայացման կարգը, հնարավոր ազդեցությունների շրջանակը և այլ հարցեր: Նշեց նաև, որ նախատեսվող գործունեությունը ենթարկվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան, և օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ դասակարգվում է որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Այնուհետև խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցչին՝ խնդրելով ներկայացնել նախատեսվող գործունեության համար դիտարկվող տարածքը, դրա գործառնական նշանակությունը, տարածքում առկա գործունեությունն ու օբյեկտները, նախատեսվող գործունեության բնութագիրը և արտադրական հզորությունը, սանիտարապաշտպանիչ գոտին, նախատեսվող տեխնիկատեխնոլոգիական լուծումները, գործունեության հնարավոր ազդեցությունները և դրանց կանխարգելման կամ մեղմման միջոցառումները և այլ հարակից հարցեր:

«Քոնսեկուարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արման Խաչատրյանը նշեց, որ առաջին հանրային լսման ընթացքում նախատեսվող գործունեությունը համայնքին ներկայացվել է, իսկ փորձաքննության ընթացքում ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման ընթացքում: Այնուհետև խոսքը փոխանցեց Գոհար Գրիգորյանին՝ նախատեսվող գործունեությունը ներկայացնելու նպատակով:

Գ. Գրիգորյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեղադրման վայրը և տարածքում նախատեսվող օբյեկտները: Նշվեց, որ կիրառվելու է չոր արտադրական տեխնոլոգիա, թրծման գործընթաց չի իրականացվելու, և լրացուցիչ գազային արտանետումներ չեն նախատեսվում: Միաժամանակ ներկայացվեցին գործունեության տարածքի հեռավորությունները Սևանա լճից, «Սևան» ազգային պարկից, բնակելի գոտուց, երկաթգծից և ձկնագետ գետից՝ նշելով, որ գործունեության տարածքը ձկնագետ գետից գտնվում է 113 մ հեռավորության վրա:

Եղանակային տեղումներից առաջացող և մակերևութային հոսքաջրերի կառավարման նպատակով իրականացվել են համապատասխան հաշվարկներ: Նշվեց, որ նախատեսվող գործունեության արդյունքում հոսքաջրերի արտահոսք դեպի ձկնագետ գետ չի նախատեսվում: Կենցաղային կեղտաջրերի կառավարման նպատակով նախատեսվում է սեպտիկ հորի տեղադրում, իսկ շինարարության և շահագործման փուլերում առաջացող թափոնները նախատեսվում է կառավարել սահմանված կարգով:

Նախատեսվող գործունեության ներկայացումից հետո ծավալվեց քննարկում՝ հարց-պատասխան ձևաչափով: Քննարկման ընթացքում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում էին նախատեսվող գործունեության համար դիտարկվող տարածքի առկա վիճակի նկարագրի և ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությանը, արտանետումների գումարային ազդեցություններին, սանիտարապաշտպանիչ

գոտիներին, բնակելի գոտուց, Սևանա լճից, «Սևան» ազգային պարկից և երկաթգծից ունեցած հեռավորություններին, մոտեցնող ճանապարհներին, արտադրական թափոնների և հոսքաջրերի առաջացմանն ու դրանց կառավարման կազմակերպմանը, Սևանա լճի պահպանությանը, ինչպես նաև կանաչապատման ընտրված տարբերակին և այլ հարցերի:

Ա. Վարդանյանը հարց բարձրացրեց տարածքում գործող ասֆալտի արտադրամասի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա լինելու վերաբերյալ:

Հարցին ի պատասխան՝ նշվեց, որ գործող ասֆալտի արտադրամասը, գործունեության փոքր ծավալներով պայմանավորված, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության չի ենթարկվել: Ասֆալտի արտադրամասը սկսել է գործել 2022 թվականից, որի համար մշակվել է համապատասխան նախագիծ և 2025 թվականին ստացվել է սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) թույլտվություն:

Քննարկում ծավալվեց արտանետման աղբյուրների և ցրման հաշվարկների վերաբերյալ: Ա. Վարդանյանը խնդրեց ներկայացնել, թե ցրման հաշվարկում կոնկրետ որ արտանետման աղբյուրներն են դիտարկվել:

Ի պատասխան՝ նշվեց, որ ցրման հաշվարկում դիտարկվել են գործող ասֆալտի արտադրամասի և նախատեսվող գործունեության բոլոր արտանետման աղբյուրները: Գումարային ազդեցության գնահատման նպատակով երկու գործունեությունների արտանետումների հաշվարկների հիման վրա իրականացվել է աղտոտող նյութերի ցրման հաշվարկ: Ներկայացված տվյալների համաձայն՝ հաշվարկների արդյունքներով ազդեցությունը, այդ թվում՝ արտադրական տարածքում, գնահատվել է զրոյական: Հաշվարկներում հաշվի են առնվել նախատեսվող գործունեության արտադրողականության առավելագույն ցուցանիշները՝ Սևանի ավազանի վրա հնարավոր ազդեցությունները գնահատելու և դրանց կանխարգելման համապատասխան միջոցառումները նախատեսելու նպատակով:

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչը հարց բարձրացրեց նախատեսվող գործունեության տարածքում առկա շինությունների վերաբերյալ՝ նշելով, որ փաստացի տարածքում առկա շինությունները պատկանում են գործող ասֆալտի արտադրամասին, մինչդեռ կադաստրային տվյալներով տվյալ հողատարածքը ներկայացված է որպես չկառուցապատված հողատարածք և որևէ շինությամբ կամ արտադրական օբյեկտով ծանրաբեռնված չէ: Նշվեց նաև, որ ներկայացված իրադրային սխեման ամբողջությամբ չի արտացոլում տարածքի փաստացի իրավիճակը: Մասնավորապես, անհրաժեշտ է իրադրային սխեմայում հստակ ներկայացնել գործող ասֆալտի արտադրամասի օբյեկտների և նախատեսվող ցեմենտի արտադրության օբյեկտների տեղադիրքերը, դրանց միջև առկա հեռավորությունները, ինչպես նաև օբյեկտներից ազատ տարածքի չափերն ու սահմանները:

Ա. Խաչատրյանը նշեց, որ տարածքն ամբողջությամբ պատկանում է «Սանի Լենդ» ընկերությանը՝ ներառյալ այնտեղ առկա շինությունները և ենթակառուցվածքները: Նա հավելեց, որ նախատեսվող գործունեության իրականացման շրջանակում նախատեսվում է կառուցել նաև լրացուցիչ պահեստային շինություններ և սեպտիկ հոր:

Անդրադարձ կատարվեց նախատեսվող գործունեության համար դիտարկվող՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 0.73786 հա ընդհանուր մակերեսով, երկու հողակտորից բաղկացած հողամասին, ինչպես նաև դրա նպատակային և գործառնական նշանակությանը: Նշվեց, որ 0.1040 հա մակերեսով հողակտորի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք (առաջին մուտքով դիտարկվող տարածք), իսկ 0.63382 հա մակերեսով հողակտորի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների (լրամշակված փաթեթում դիտարկվող տարածք):

Հարց բարձրացվեց, թե ընկերությունը որտեղից է նախատեսում ձեռք բերել նախատեսվող գործունեության իրականացման համար անհրաժեշտ հումքը:

Ի պատասխան՝ նշվեց, որ անհրաժեշտ հումքը նախատեսվում է ձեռք բերել համապատասխան հանքավայրերից:

Հ. Ֆրունզիկյանը հարց բարձրացրեց նաև նախատեսվող գործունեության տարածքի կանաչապատման վերաբերյալ՝ մասնավորապես հետաքրքրվելով, թե արդյոք նախատեսվում է տարածքի երկշերտ կանաչապատում և առկա է արդյոք համապատասխան կանաչապատման նախագիծ: Հաշվի առնելով նախատեսվող գործունեության բնույթը և հնարավոր ազդեցությունները որպես լրացուցիչ պայման նախատեսել երկշերտ կանաչապատում:

Քննարկում ծավալվեց «Սևանա լճի մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված արգելքների և նախատեսվող գործունեության՝ տվյալ պահանջներին համապատասխանության վերաբերյալ: Ա. Վարդանյանը

խնդրեց նախաձեռնողի ներկայացուցիչներին ներկայացնել համապատասխան հիմնավորումներ՝ հաշվի առնելով նաև մասնագիտական կառույցների՝ ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության հարցերով հանձնաժողովի և Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի կողմից ներկայացված մասնագիտական կարծիքները:

Ա. Վարդանյանը նշեց, որ ներկայացված փաթեթում առկա են անհամապատասխանություններ և անճշտություններ: Նա նշեց, որ առաջին մուտքով ներկայացված փաստաթղթերում ընդհանրապես չի ներկայացվել տարածքում գործող ասֆալտի արտադրամասի վերաբերյալ տեղեկատվությունը: Միաժամանակ նշեց, որ առաջին մուտքով ցեմենտի արտադրության համար դիտարկվող հողամասը ներկայացվել է որպես Ընկերությանը պատկանող հողամասի գյուղատնտեսական նշանակության հատված: Փորձաքննության ընթացքում կատարվել է նախագծման թույլտվության և գործունեության տեղադիրքի փոփոխություն, սակայն ներկայացված գծագրերը չեն արտացոլում տվյալ հողամասում առկա ամբողջական իրավիճակը և նախատեսվող գործունեության տեղադիրքերը:

Անհամապատասխանություններ կան ընկերության կողմից ներկայացված՝ Ձկնագետ գետի հեռավորության վերաբերյալ տվյալներում: Նրա խոսքով՝ հաշվարկներում դիտարկվել է գետի նկատմամբ հեռավորությունը միայն մեկ ուղղությամբ, մինչդեռ գետը դիտարկվող տարածքին հարում է երկու կողմերից: Բացի այդ, ներկայացված 113 մ հեռավորությունը հաշվարկվել է գնդային աղացի տեղադրման կետից, ինչը, նրա դիտարկմամբ, ամբողջությամբ չի արտացոլում տարածքի և գետի փոխադարձ դիրքը:

Հավելեց, որ Փորձաքննության գործընթացում՝ օրենքի 17-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, իրականացվել են տեղազննման աշխատանքներ՝ տարածքի փաստացի վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով: Արձանագրվել է տարածքի և գետամերձ հատվածի փաստացի վիճակը: Նա ընդգծեց, որ անկախ այն հանգամանքից՝ տվյալ տարածքում գործող ասֆալտի արտադրամասը անցել է փորձաքննություն, թե ոչ, տեղազննության պահին տարածքը և գետամերձ հատվածը գտնվել են խիստ անբարեկարգ և բնապահպանական առումով մտահոգիչ վիճակում:

Քաղաքաշինության կոմիտեի և Առողջապահության նախարարության կողմից ներկայացված դիտարկումներին Ընկերությունը փորձաքննական փաթեթի լրամշակման ընթացքում պատշաճ կերպով հաշվի չեն առնվել:

Փորձագետը նշեց, որ նախատեսվող գործունեության իրականացման ազդեցությունները կանխարգելելու կամ մեղմելու նպատակով շինարարության և շահագործման փուլերում նախատեսվել են համապատասխան միջոցառումներ նախատեսվող գործունեության տեխնոլոգիական լուծումները մշակելիս, որոնք ներառվել են գնահատման հաշվետվության բնապահպանական կառավարման պլանում և նախաձեռնողը հետևելու է Հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսվելու են հավելյալ միջոցառումներ:

Հավելեց նաև, որ համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն:

Հանրային լուծումները նկարահանվել և տեսաձայնագրվել է:


Հանրային լուծումների մասնակիցների ցանկը կցված է արձանագրությանը:

Լուծումների վարող, պատասխանատու

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության

փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝

Նախաձեռնող՝
«Սանի Լենդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ



Աստղիկ Վարդանյան

Գոհար Գրիգորյան